ՊՍՏԻԿ ԳՐՔՈՒՅԿ

Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ



# ԱՂՎԵՍԸ

ՊԵՏՀՐԱՏ
ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏ. ԳՐ. ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 193

6112-ԱԳՂ

Աղվեսն յեկավ բարձըր սարից,
Հարցմունք արավ լիքը Թառից․
«Մեծ խորոզ ե հարկավոր ինձ»․
Քաղցած աղվեսն, ագին ծաղիկ։

Աղվեսն հագել քուրքը դեղին,
Պըտտում կու գա շուրջը գեղին,
Ջուր կըտըրվեց տատիս լեղին․
Դեղին աղվեսն, ագին ծաղիկ։



Աղվեսն ասավ պառավ տատին․
«Մըտիկ չեմ տա ձեռիդ փետին,
Կարոտել եմ Թմփլիկ ճուտին»․
Անվախ աղվեսն, ագին ծաղիկ։

Աղվեսն յեկել, նստել դեզին,
Յերկար ագին ծըռել վըզին,
Աչք ե ձըգել մեր խորոզին․
Են դող աղվեսն, ագին ծաղիկ։



Մին էլ կանչեց տատը պառավ.
«Ամա՜ն, հասե՜ք, տարա՜վ, կերա՜վ…
Գըլխիս ես ի՞նչ փորձանք բերավ
Անտեր աղվեսն, ագի՜ն ծաղիկ։

Ա՜յ իմ խորոզ, կարմիր խորոզ,
Ման կու գայիր գոռոզ-գոռոզ.
Փետուրդ արավ վողջ դար ու փոս
Են չար աղվեսն, ագի՜ն ծաղիկ»։



Աղվես, աղվես, փոքրիկ գազան,
Վոտներըդ կարճ ու խիստ վազան,
Շըներն ամեն քեզ չը հասան,
Ճարպիկ աղվես, ագին ծաղիկ։



Խմբագիր՝ Ն. Թումանյան
Նկարները Աղ. Ծահվերդյանի
Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան
Լիտոգր. նկարիչ՝ Ս. Գասպարյան
Սրբագրիչ՝ Ս. Փուրսաղանյան

ՀՀ Ազգային գրադարան
NL0928402

Գլավլիտի լիազոր՝ Վ—2156
Պատվեր 697. Տիրաժ 5000.

Պետհրատի I տպարան, Յերևան, 1939

Գինը 50 կ.

13 -20-

ԱՓՀ
6112

**ОВ. ТУМАНЯН**

# Л И С А

Гиз Арм. ССР, Ереван, 1939